



Analysis Research & Planning For Armenia

ԱՐՓԱ Հիմնարկի նորարարության մրցույթ

1. Ծրագրի նպատակները- ԱՐՓԱ ինստիտուտի նորարարության մրցույթը կազմակերպված է գիտահետազոտական եւ համալսարանական մակարդակով եւ նպատակ ունի քաջալերել ուսանողներին, ասպիրանտներին եւ երիտասարդ գիտնականներին գիտական տարբեր բնագավառներում (օրինակ՝ ճարտարագիտություն, անօդաչու սարքեր, ոսպօթնր, էլեկտրոնիկ եւ կամ մեխանիկական տեխնոլոգիա, բժշկագիտություն և այլն): Այս հեղինակավոր մարտահրավերը խրախուսում է հետազոտող երիտասարդ գիտնականներին, ինչպես նաև ուսանողի-ասպիրանտի եւ դասախոսի միջև աշխատանքային փոխհարաբերությունները, որտեղ դասախոսը կարող է մասնակցել որպես խորհրդատու, որպեսզի ստեղծեն Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) նոր արտադրանքներ: Ծրագրի հիմնական նպատակն է քաջալերել պատենտավորման ենթակա նորարարությունների կամ նորարարական ծրագրերի մշակումը ՀՀ, խթանել ամենավերջին տեխնոլոգիաների եւ հետաքրքրությունը գյուտարարության նկատմամբ: Նորարարությունն այստեղ նշանակում է գյուտարարություն եւ գյուտի գործնականացման նախնական տվյալների յստակ ներկայացում հայտի մեջ:

2. Կազմակերպիչ- ԱՐՓԱ Ինստիտուտ, Լոս Անջելոս, Կալիֆորնիա, ԱՄՆ:

3. Հովանավորներ- ՀՀ Գիտության, Կրթության, Մշակույթի եւ Սպորթի Նախարարություն եւ ԱՐՓԱ Հիմնարկ:

4. Պահանջներ-Նորարարությունը՝ գործնականորեն կիրառելի մտահղացումը եւ աշխատող նմուշը (մոդելը) պետք է լինի երիտասարդ գիտնականի (ներու) (ով երեսուն հինգ եւ կամ նուազ տարիքի է), եւ կամ առավելագույնը չորս ուսանողներից կազմված խմբի ինքնատիպ (օրիգինալ) աշխատանք, եւ կամ համալսարանական ղեկավարի հսկողությամբ՝ խմբի աշխատանք: Եթե առաջարկը նոր մեքենա եւ կամ մեխանիկական սարք է, ապա այն պետք է լինի կառավարելի: Քիմիական նյութի դեպքում, այն պետք է ամբողջական լինի՝ մտահղացման հաջողակ կիրառման ապացույցով: Նոր բույսի դեպքում պետք է ներկայացվեն գունավոր լուսանկարներ եւ սահիկներ (պլայտներ): Արտադրանքի պարագայում, նոր կամ ինքնուրույն գեղանկարչական նախագծի դեպքում հայտը պետք է պարունակի ամբողջական նախագիծ, իր բոլոր մանրամասներով: Բացի այդ, նորարարությունը պետք է վերարտադրելի լինի եւ ունենա արտադրանք դառնալու փաստացի հնարավորություն: Հայտը պետք է իրենից ներկայացնի երիտասարդ գիտնականի, եւ

կամ ուսանողի եւ կամ ուսանող-ղեկավար խմբի ինքնուրույն մտահղացումը կամ աշխատանքը, որը պետք չէ՝ 1. Հանրության համար մատչելի առևտրական արտադրանք, գործընթաց լինի եւ կամ 2. Պատենտավորված կամ հրատարակված լինի մրցույթին ներկայացման օրից մեկ տարուց ավել ժամկետում: Հայտը պետք է ներկայացվի նախընտրաբար անգլերեն լեզվով: Եթէ անհնար է անգլերեն լեզվով ներկայացնել, այդ դեպքում հայերեն տարբերակի հետ պետք է թարգմանել անգլերեն լեզվով ներկայացուած հայտը եւ երկուսը միասին ներկայացնել, բավարար մանրամասնություններով: Հստակորեն պետք է ներկայացվեն հայտի մանրամասն նկարագրությունն ու տվյալները, ինչպես նաեւ պետք է ներկայացնել թե՛ կիրառման եւ թե՛ թվային տվյալներ՝ փաստելու համար հայտի մեջ նշված նորությունը եւ մտահղացումի ինքնուրույնությունը: Հայտը պետք է պարունակի, անձնական տվյալնրից բացի մանրամասնօրեն նկարագրված հետևյալ բաժինները

- Ներածական** – Նկարագրել ձեր արած նորարարությունը: Մոտավորապես մեկ էջ:
- Առաջարկված նորարարության հետ առնջվող նախկինում կատարված աշխատանքների ամբողջական վերլուծում** – նորարարության առավելությունները առկա նմանատիպ հնարքների նկատմամբ (ոչ միայն Ռուսական, այլ բոլոր արեւմտյան երկիրների, Ճափոնիայի, Չինաստանի, եւ այլն): Նկարագրեք, որքան կարելի է պարզ եւ ամփոփ, նորարարության արժեքն ու նշանակությունը գիտության, տեխնոլոգիայի եւ հասարակության համար: Մոտ երեք էջ:
- Նորարարության բնույթն ու նպատակները** – Հակիրճ բացատրական նորարարության մասին, ինչ է, ինչ է անելու եւ ինչի համար է սարքված: Մոտ երկու էջ:
- Հայտի մանրամասն նկարագրությունը**: Պատկերներով եւ ուրվագծերով (սխեմաներով), հստակ բացատրություններ ներկայացնել, բոլոր ստորաբաժանումներով, թէ ինչն է նոր ձեր հնարածի մեջ, ինչն ու է նոր եւ ինչպես է նա տարբերվում առկա նմանատիպ համակարգերից (սխտեմ) եւ ինչ են նրա առավելությունները, մանրամասն փաստարկումներով: Մոտավորապես վեց էջ:
- Փորձարկում եւ փորձարական թվային տվյալներ**: Պետք է ներկայացնել փորձարական քննարկումների արդյունքներ, թվային տվյալներ որոնք պետք է ստացած լինեք ձեր սարքած նմուշի լապարատորիայի մեջ փորձարկումներով: Նաեւ քննարկել ստացված էքսպերիմենտալ-թվային արժեքները եւ հարաբերել առկա համակարգերից ստացված արդյունքներին: Մոտավորապես վեց էջ:
- Նկարագրություն հայտի նորարարության բաղադատական տվյալների մասին**: Մանրամասն բաղադատել ձեր հայտի նորությունները առկա ամենավերջին եւ նմանատիպ սարքերի-համակարգերի հետ եւ մեջբերել նրա առավելությունները: Հստակ կերպով շնել թէ ձեր առաջարկությունը ինչպես նա լուծում կամ չեզոքացնում է առկա նմաորինակ սարքավորման թերությունները: Փաստել թե ձեր նորարարությունը շատ ավելի լաւն է եւ կարող քան առկա համակարգերը: Մոտավորապես երկու էջ:
- Եզրակացություն** – ամփոփել ձեր ներկայացրած հայտի արդյունքները եւ եզրակացնել: Մոտ մեկ էջ:

5. Հայտերի ներկայացման վերջնաժամկետ – Հայտերը պետք է ներկայացնել (upload) PDF ֆորմատով ԱՐՓՍ Ինստիտուտի կայքէջի՝

<http://www.arpainstitute.org/Invention%20Competition.html>

վրա նշուած հասցէին, մինչեւ ԱՐՓԱ հիմնարկի վրա դրված թվականը, կամ թվականից առաջ:

6. Խորհուրդներ լաւ հայտ ներկայացնելու մասին: Գնահատող հանձնաժողովի համար հասկանալի կերպով եւ մանրամասնորեն նկարագրէք ծրագիրը: Պահանջվածը ստանալու համար հայտը պետք է լինի՝

- Մէքենագրված եւ անզերէնով պատրաստված Microsoft Word ծրագրով (հայերէնի դէպքում՝ երկու լեզուներով)* եւ որը փոխանցվի pdf-ի, համարակալված էջերով:
- Հստակ և ըստ էության* – որն է ձեր նորարարությունը: Շատ կարեւոր է բացատրել և փաստարկումներով համոզել, ներկայացնելով ստացված թվային արդյունքներ, բաղադատականներ այլ նմանատիպ սարքերի հետ եւ փաստել, որ ձերը առավելություններով գերազանցում է որեւէ միեւնոյն տիպի այլ սարքավորման: Գնահատող հանձնաժողովին հետաքրքրում է, թե որն է ձեր ներդրումը տեխնոլոգիայի մեջ: Օգտակար կլինի եթէ ձեր հայտը կարգան աշխատանքին եւ նյութին անձանօթ անձեր, եւ գնահատեն որպէս անկողմնակալ քննարկուներ:
- Հակիրճ* – Խուսափէք բարդ բառերից, որքան հակիրճ եւ տեղին՝ այնքան լավ: Ավելորդ նյութերը – հավելված եւ այլն – շեղում են ուշադրությունը ուժեղ առաջարկից: Շարադրէք բոլոր պահանջված տեղեկությունները եւ բաղադատական ու թվային արդյունքները, ստուգված եւ փաստարկված, համոզիչ կերպով, նկարների եւ գրաֆիկների ընկերակցությամբ:
- Ամբողջական* – ձեր հավաստիության համար ստորել տրված է ստուգացուցակ:
- Համոզիչ* – Որպէս հեղինակ՝ միմիայն ձեզնից է կախված, թե որքանով կկարողանաք համոզել գնահատող հանձնաժողովի անդամներին, որոնք կարող են տարբեր մասնագիտությունների տեր անձինք լինել, որ ձեր ներկայացրած հայտը լավագույնն է՝ բազմաթիւ բարձրորակ այլ հայտերի շարքում: Չնայած գնահատող հանձնաժողովի անդամները փորձառու մասնագետներ են, այնուամենայնիվ նրանք կարող են ծանոթ չլինել ձեր յուրահատուկ ծրագրին: Ուստի նկարագրէք ձեր հայտը հնարավորին չափ մատչելի ձևով, ինչպէս նաեւ ցանկացած գիտաշխատողի համար հասկանալի ոճով եւ ներկայացրէք ձեր կատարած փորձերից ստացված արդյունքները եւ թվային արդյունքները (տաթան), սխեմաներ, բաղադատականներ առկա այլ նման համակարգերի հետ, եւ այլն:

7. Անհրաժեշտ փաստաթուղթերի ցանկ՝ - մրցույթին մասնակցելու համար հայտը պետք է ներառի հետեւյալները՝ **(առանց որոնց ընդունելի չէ)**

- Տեղեկություններ ուսանողի(ների) եւ կամ գիտնականի մասին:
- Տեղեկություններ ղեկավարի մասին (եթէ առկա է):
- Ուսանողի պարագային՝ հայտի շարադրությունը եւ ղեկավարի կողմից գրված նամակը՝ ըստ ստորեւ ներկայացված ձեւի, փաստաթուղթ համալսարանի պաշտոնէութենից ուսանող լինելու մասին, վավերացված պաշտոնական կնիքով: Գիտնական-գիտաշխատողի պարագային՝ տեղեկություններ աշխատանքի, կատարած հետազոտությունների, ստացած արդյունքների եւ այլն:
- Նորարարության մասին հավելյալ նյութեր,՝ գծագրություններ, լուսանկարներ, սահիկներ կամ տեսաժապավեններ:
- Ներկայացված նյութի գաղտնիությանը վերաբերող ուսանողի(ների)-ղեկավարի ինչպէս նաեւ գիտնական-գիտաշխատողի կողմից ստորագրված փաստաթուղթ:

8. Հայտը եւ լրացուցիչ նյութերը հանձնել՝ Մրցույթին մասնակցելու համար ձեր հայտը եւ լրացուցիչ նյութերը հանձնել վերոհիշյալ pdf ֆորմատով նշված կայքէջին:

9. Ուլքե՞ր են իրավասու մասնակցելու մրցույթին – Յուրաքանչյուր հայաստանի քաղաքացի երիտասարդ գիտնական 35 տարեկան կամ պակաս, ուսանող եւ կամ ասպիրանտ, որը սովորում է ՀՀ ճանաչված որեւէ համալսարանում, իրավասու է մասնակցել մրցույթին: Ուսանողի պարագային **պայմանաւ, որ հայտի հետ ներկայացնի համալսարանի կողմից վավերացված փաստաթուղթ:** Խմբի դեպքում՝ խմբի յուրաքանչյուր մասնակից պետք է բավարարի ուսանող կամ ասպիրանտ լինելու պահանջարկը փաստաթղթով: Գիտնական-գիտաշխատողի պարագային՝ որեւէ անձ որ 35 տարեկանից ոչ աւել է:

10. Մրցանակաբաշխություն – Մրցույթին հաղթող հայտը կպարգևատրվի դրամական մրցանակով, իսկ բոլոր մասնակիցները կստանան մասնակցության վկայակայագրեր: Հաղթող հայտը կստանա \$5000: Դրամական մրցանակը եւ վկայագրերը կշնորհվեն մրցույթին ներկայացված հայտերի արժեվորումից հետո՝ հատուկ արարարողության ժամանակ, ճշտված տարեթվի:

11. Հայտի անհրաժեշտ ստորաբաժիններ:

Մասն առաջին – Տեղեկատվություն գիտնական(ների) եւ կամ ուսանողի(ների) մասին (խմբի դեպքում նշեք բոլոր մասնակիցներին):

Ազգանուն	Անուն	Հայրանուն
----------	-------	-----------

Ազգանուն	Անուն	Հայրանուն
----------	-------	-----------

Ազգանուն	Անուն	Հայրանուն
----------	-------	-----------

Ազգանուն	Անուն	Հայրանուն
----------	-------	-----------

Հասցե:

Ներկայացուցիչ անձի անուն, հեռախոսահամարներ եւ բջջայինի համարներ:

Ուսումնական հաստատության անվանումն ու հասցեն:

Ներկա ուսումնական կարգավիճակ:

Նորարարության Անվանումը:

Ընդունելի Բնագավառներ

- Ծրագրային տեղեկատվական տեխնոլոգիա
- Էլեկտրոնիկա կամ համակարգչային տեխնոլոգիա
- Բնական Գիտություններ, Robot-ներ, Անօդաչու Սարքեր
- Բժշկագիտական-դեղագործական
- Կենսաբանական-գենետիկ տեխնոլոգիաներ
- Քիմիա-ֆիզիկա
- Ճարտարագիտություն
- Արտաքին միջավայր, գիւղատնտեսական եւ բնապահպանական տեխնոլոգիա

Ուշադրություն

Նորարարության մրցույթի բոլոր մասերի պահանջները լիովին պետք է բավարարել, այլապես ներկայացված հայտը չեղյալ է համարվելու:

Մասն երկրորդ – Բացատրություն նորարարության մասին:

Այս մասում ներկայացրեք ձեր նորարարության անվանումը եւ նկարագրությունը՝ պարզաբանելով նրա էությունը եւ այն ազդեցությունը, որը կարող է ունենալ բնագավառի ներկա տեխնոլոգիայի վրա: Մանրամասն նկարագրեք, թե ձեր գյուտը ինչպես է աշխատում, ինչ է անում եւ ինչպես այն կարող է շուկայական արտադրանք դառնալ: Պարզաբանեք նաեւ նրա տեխնիկական արժանիքները եւ ներկայացրեք սարքված նմուշի վրա կատարված փորձարկումների արդյունքներից ստացված տվյալներն ու եզրակացությունները: Մանրամասն համեմատեք այն առկա նմանօրինակ սարքերի հետ, հստակ նշելով նրա առավելությունները առկա համակարգերի նկատմամբ: Հետեւեք վերը նշված պահանջարկներին:

Հավելյալ նյութեր – Հավելյալ նյութերը ներառում են լուսանկարներ, տեսաժապավեններ, նմուշների նկարներ, գծագրական պատկերացումներ եւ որեւէ այլ տվյալներ, որոնք հանձնաժողովի անդամներին օգտակար կը լինեն հասկանալու նորարարության սկզբունքները, հատկանիշներն ու առավելությունները:

Մասն երրորդ – Գրականության հետազոտություն եւ ստուգում:

Գրականության միջազգային (Ամերիկյան, Եւրոպական, ճափոնական, Ռուսական, եւ այլն) հետազոտությունը եւ առկա նմանօրինակ պատենտների ստուգումը եւ հայտի հետ բաղդատականը պարտադիր է՝ պարզելու համար, թե որքանով է յուրահատուկ ձեր ներկայացրած նորարարությունը: Պատշաճ ձեւով գրեք աշխատանքի կարեւոր հատկանիշների մասին եւ բաղդատեք այլոց հետ: Ստորեւ բերված տվյալները պետք է լրացվեն եւ ստորագրվեն բոլոր մասնակիցների կողմից:

Ուսանողի/գիտնականի ազգանուն	Անուն	Ստորագրություն
-----------------------------	-------	----------------

Բնակարանի Հասցե	Էլեկտրոնային հասցե
-----------------	--------------------

Հերախոսի եւ բջջայինի համարներ	Նորարարության անվանում
-------------------------------	------------------------

Ուսանողի ազգանուն Ստորագրություն	Անուն
-------------------------------------	-------

Բնակարանի Հասցե Էլեկտրոնային հասցե

Հերախոսի եւ բջջայինի համարներ	Նորարարության անվանում
-------------------------------	------------------------

Ուսանողի/գիտնականի ազգանուն	Անուն	Ստորագրություն
-----------------------------	-------	----------------

Բնակարանի Հասցե Էլեկտրոնային հասցե

Հեռախոսի եւ բջջայինի համարներ անվանում	Նորարարության
---	---------------

Ուսանողի ազգանուն Ստորագրություն	Անուն
-------------------------------------	-------

Բնակարանի Հասցե	Էլեկտրոնային հասցե
-----------------	--------------------

Հերախոսի եւ բջջայինի համարներ

Նորարարության անվանում

Մասն չորրորդ – Տեղեկություն ղեկավարի (եթե առկա է) մասին եւ մասնակցության աստիճանը

Ղեկավարի ազգանուն
Ստորագրություն

Անուն

Բնակարանի Հասցե
Էլեկտրոնային հասցե

Հեռախոսի եւ բջջայինի համարներ

Նորարարության անվանում

Ղեկավարի կարծիքը նորարարության մասին եւ տվյալ նախագծի շրջանակներում՝
մասնակցության աստիճանը:

Մասն հինգերորդ – Ուսանողների ուսումնական կարգավիճակի հավաստագիր:

Ստորագրյալս _____ (Ուսանողի համալսարանի համապատասխան պաշտոնյա) հաստատում եմ, որ հետեյալ ուսանող(ները), ներկայում ուսանում է (են) կամ վերջին մեկ տարվան ընթացքում ուսանել է (են) հետեյալ ուսումնական հաստատությունում՝

Պաշտոնյայի Ազգանունը	Անունը	Պաշտոնը	Ստորագրությունը
Ուսանողի Ազգանունը եւ Անունը		Պաշտոնիայի	Ստորագրությունը
Ուսանողի Ազգանունը եւ Անունը		Պաշտոնիայի	Ստորագրությունը
Ուսանողի Ազգանունը եւ Անունը		Պաշտոնիայի	Ստորագրությունը
Ուսանողի Ազգանունը եւ Անունը		Պաշտոնիայի	Ստորագրությունը

12. Երաշխավորություն (անպայման ներկայացնել). ԱՐՓԱ Ինստիտուտը, որպես նորարարության մրցույթի կազմակերպիչ, վստահեցնում է ներկայացված տեղեկությունների գաղտնի պահպանման մասին: Սակայն ներկայացված հայտերը վերանայվելու են նաև մասնագետների կողմից, որոնք պարտադիր չեն որ լինեն ԱՐՓԱ-յի անդամներ կամ ներկայացուցիչներ: Ուստի, յուրաքանչյուր դիմորդ էլ (ուսանողի պարագային) իր ղեկավարի հետ միասին պետք է ընթերցեն եւ ստորագրեն հետեւյալ փաստաթուղթը:

Ստորեւ ստորագրողները տեղեկացված լինելով մրցույթի սկզբունքներին՝ կամավոր կերպով հանձնում են որեւէ անվանումով նորարարությունը ԱՐՓԱ Ինստիտուտի կազմակերպիչներին՝ մրցանակի արժանանալու հույսով:

Ստորեւ ստորագրող ուսանող(ները) եւ նրա(նց) ղեկավարը (եթե առկա է) ազատում են ԱՐՓԱ Ինստիտուտը, նրա ներկայացուցիչներին, պաշտոնական անձանց եւ կամավոր այլ մասնագետներին հայտում առկա տեղեկությունների օգտագործման եւ գաղտնապահության պատասխանատվությունից:

Դիմորդը (ները) տալիս է(են) իր(ենց) համաձայնությունը առ այն, որ իր(ենց) կողմից ներկայացված հայտը մրցանակի արժանանալու դեպքում ԱՐՓԱ-ն իրավասու է օգտագործել նորարարության դիմորդների անունները, լուսանկար-տեսաներիզները, հավելյալ նյութերը եւ նորարարության կարճ նկարագրությունը հոդվածներում այն չափով ինչքանով դա հարմար կգտնի:

Սակայն, այս փաստաթղթի ստորագրումը ԱՐՓԱ Ինստիտուտին որեւէ իրավունք չի տալիս օգտագործելու նորարարության նյութերը շուկայական նպատակներով եւ կամ շնորհելու այդ իրավունքը մեկ այլ երրորդ կազմակերպության: Նորարարության պատենտավորման իրավունքը ստանալու համար խորհուրդ է տրվում գյուտի բացահայտման կամ շուկայական նպատակներով օգտագործման օրից սկսած մեկ տարվա ընթացքում լրացնել պատենտավորման փաստաթուղթը:

Միջազգային պատենտի ամրագրման դեպքում պատենտավորումը պետք է կատարվի նախքան որեւէ հոդվածի լույս ընծայումը կամ շուկայական նպատակներով օգտագործումը: Կասկածները փարատելու համար խորհուրդ ենք տալիս հնարավորին չափ շուտ նախաձեռնել տվյալ գյուտի պատենտավորման գործընթացը կամ քայլեր ձեռնարկելու դեպքում՝ խորհրդակցել փաստաբանի հետ:

Ուսանողի/գիտնականի ազգանուն	Անուն	Ստորագրություն
Ուսանողի/գիտնականի ազգանուն	Անուն	Ստորագրություն
Ուսանողի/գիտնականի ազգանուն	Անուն	Ստորագրություն
Ուսանողի/գիտնականի ազգանուն	Անուն	Ստորագրություն
Ղեկավարի Ազգանուն (եթե առկա է)	Անուն	Ստորագրություն

Հարցերի կամ այլ տեղեկությունների համար գրեք հետևյալ հասցեով՝ info@arpainstitute.org